ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ (18 ՀՈԴՎԱԾԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆԸ, 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ, 37-ՐԴ ԵՎ 42-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 3-րդ մասի՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ պարբերությանը, 6-րդ հոդվածի երկրորդ, 37-րդ և 42-րդ հոդվածների երրորդ պարբերություններին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2006թ. սեպտեմբերի 19-ին:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Զ. Ղուկասյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 8-րդ մասի հիման վրա գործի քննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 3-րդ մասի և 71 հոդվածի 7-րդ մասի՝ սահմանադրական դատարանում «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ պարբերությանը, 6-րդ հոդվածի երկրորդ, 37-րդ և 42-րդ հոդվածների երրորդ պարբերություններին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը քննելիս որպես պատասխանող կողմ ներգրավել նշված օրենքն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 հուլիսի 2006 թվականի
ՍԴԱՈ-37